

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԱՌԵՎՏՐԻ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

### **1. Կարգավորման ենթակա խնդիրը.**

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (այսուհետ՝ Նախագիծ), «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և ««Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը մշակվել են ՀՀ վարչապետի կողմից 23.01.2023թ.-ին ՀՀ ՊԵԿ-ում անցկացված խորհրդակցության N Վ/08-2023 արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 5-րդ կետի 2-րդ ենթակետի կատարումն ապահովելու նպատակով:

### **2. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

2022 թվականին ավարտված դատական գործերի ցուցանիշների համաձայն վարչական դատարանների կողմից կայացված որոշումների գերակշռիչ մասը կայացվել է ի օգուտ տնտեսվարողի, և ՀՀ ՊԵԿ կողմից իրականացված վարչարարության արդյունքում կայացված որոշումների և դատարանների կողմից կայացված որոշումների միջև առկա շեղումները կարող են պայմանավորված լինել որոշակի հանգամանքներով, ուստի Արձանագրության 5-րդ կետի 2-րդ ենթակետով հանձնարարվել է դատական համակարգի հետ ցուցանիշների միջև առկա շեղումների խնդրի կարգավորման շրջանակներում իրականացնել քննարկումներ և վեր հանել հնարավոր խնդիրները:

ՀՀ կառավարության կողմից որդեգրվել է ստվերային տնտեսության դեմ պայքարի հետևողական քաղաքականություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ հարկային հսկողության արդյունքներով՝ ՀԴՄ կտրոն չտրամադրելու, աշխատողների՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չլինելու դեպքում փաստացի աշխատանք կատարելու դեպքեր հայտնաբերելիս

ապացուցողական բեռը շատ բարդ է՝ անհրաժեշտություն է առաջացել որպես հարկային հսկողության հարակից ընթացակարգի տեսակ սահմանել տեսաձայնագրումը հարկային հսկողության ընթացքում՝ հարկային հսկողության շրջանակներում արձանագրված խախտման փաստը հաստատող հանգամանքները հիմնավորելու նպատակով:

Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտման, աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և/կամ աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտության ստուգման արդյունքում կազմված վարչական ակտերի գերակշիռ մասը դատական կարգով վիճարկման արդյունքում ճանաչվում է անվավեր: Որպես կանոն անվավեր ճանաչվելու հիմքում դրվում է այն փաստը, որ չի հիմնավորվում հսկիչ գնում կատարելու կամ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու պայմաններում աշխատողների փաստացի աշխատանք կատարելու փաստը: Այսպես, օրինակ՝

1) թիվ ՎԴ1/0001/05/23 դատական գործի շրջանակներում դատարանը եզրահանգել է որ հայցվորի պահանջն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Ուսումնասիրելով հայցվորի և պատասխանողի ներկայացված դիրքորոշումները, ինչպես նաև հետազոտելով և գնահատելով նույն գործում առկա ապացույցները՝ Դատարանը, առաջնահերթ, անհրաժեշտ է համարում պարզել նույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, թե արդյոք հաստատվում է հսկիչ գնում կատարելու փաստական հանգամանքը: Դատարանը գտնում է, որ դատական գործում առկա ապացույցներով չի հաստատվում հսկիչ գնում կատարված լինելու փաստական հանգամանքը, քանի որ դրանք արժանահավատ չեն:

2) թիվ ՎԴ/4565/05/22 դատական գործի շրջանակներում դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Չապացուցված է մնում այն հանգամանքը, թե հսկիչ գնման պահին կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ՝ թե ոչ: Դատարանը հանգում է այն եզրակացության, որ վիճարկվող վարչական ակտը անվավեր է քանի որ Պատասխանողի կողմից ներկայացված վարչական վարույթի նյութերով չի հիմնավորվում Հայցվորի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելու և ըստ այդմ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտումը:»:

Գործող իրավակարգավորումների համաձայն հարկային հսկողության ընթացքում կարող է տեսաձայնագրում կիրառվել բացառապես հարկային հսկողության համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման նպատակով հարկ վճարողի տարածքների, շինությունների, փոխադրամիջոցների, փաստաթղթերի և առարկաների զննման շրջանակում, այն էլ՝ հարկ վճարողին նախապես գրավոր ծանուցելուց հետո միայն (ՀՕ 354 հդՊ): Ուստի, տեսաձայնագրման սարքեր կիրառելը ներկա իրավակարգավորումների պարագայում կարող է հակասության մեջ մտնել Սահմանադրության 31-րդ հոդվածի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի հետ:

Ներկա վիճակում տնտեսության մեջ առկա ստվերային շրջանառությունները կրճատելու նպատակով առաջարկվում են նոր մոտեցումներ: Անհրաժեշտությունը հիմնավորվում է ինչպես միջազգային փորձով, այնպես էլ առկա իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրները լուծելու նպատակով, մասնավորապես՝ ներկայումս իրավակիրառ պրակտիկայում զգալի թիվ են կազմում ընթացակարգային խախտումների վերաբերյալ հարկատուների բողոքները, ինչպես նաև դեպքերի զգալի մասով անհնարին է լինում ապահովել ապացույցների այնպիսի փաթեթ, որը կբավարարի վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը:

Նշվածի հետ կապված հարկ է նշել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, **երկրի տնտեսական բարեկեցության**, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ **երկրի տնտեսական բարեկեցության**, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»

Վերոգրյալ նորմ-երաշխիքների վերլուծությունից հետևում է, որ անձնական և ընտանեկան կյանքի անձեռնխելիությունը կարող է սահմանափակվել, երբ այն ուղղակիորեն նախատեսված է **օրենքով, անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում և ուղղված է երկրի տնտեսական բարեկեցությանը (ի թիվս այլնի):**

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն անձնական կյանք հասկացությունը ինքնավար է և ներառում է նաև մասնագիտական կամ առևտրային գործունեությունը<sup>1</sup>: Այդուհանդերձ հարկ է նկատել, որ ՄԻԵԴ-ը իր որոշումներով ամրագրել է այն դիրքորոշումը, որ **տեսանկարահանումը կարող է միջամտել անձնական կյանքի անձեռնխելիությանը, երբ այն կրում է սիստեմատիկ, մշտական բնույթ**<sup>2</sup>: Միաժամանակ դատարանն արձանագրել է, որ միջամտությունը (գաղտնի տեսաձայնագրում կիրառելը) կարող է իրավաչափ լինել միայն այն դեպքում, երբ այն ուղղակիորեն նախատեսված է օրենքով և օրենքի որակը թույլ է տալիս բացառելու կամայականությունները<sup>3</sup>:

ՄԻԵԴ-ը Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի գործով (գանգատներ թիվ 40660/08 և 60641/08) անդրադարձ է կատարել անձնական կյանքի և իրավունքների պաշտպանությանը միջամտելուն: Այսպես նույն գործով դատարանը հայտնել է, որ անձնական իրավունքների պաշտպանության իրավունքը ավելի ծանրակշիռ է դառնում, **եթե լուսանկարը պատկերում է անձի անձնական կյանքի մանրամասներ**, որոնք հանրային բնական քննարկման առարկա չեն: Նույնը վերաբերում է այն դեպքին, երբ շահագրգիռ **անձը կարող էր իրավաչափորեն ակնկալել**, հաշվի առնելով հանգամանքները, որ ոչ մի լուսանկար չի հրապարակվի, քանի որ նա մասնավոր վայրում էր (räumliche Privatheit), ինչպես օրինակ հատուկ պաշտպանված

<sup>1</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-175121%22%5D%7D>, պարբերություն 130:

<sup>2</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-59665%22%5D%7D>, պարբերություն 57:

<sup>3</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-59665%22%5D%7D>, պարբերություն 61:

վայրում: ՄԻԵԴ-ը նշել է, որ անձնական իրավունքների պաշտպանության իրավունքը պետք է գերակայի նաև հրապարակման շահի նկատմամբ տարածական մեկուսացումից բացի նաև այն դեպքերում, երբ շահագրգիռ անձը լուսանկարվել է հանգիստը վայելելիս կամ մասնագիտական կամ ամենօրյա կյանքի սահմանափակումներից ազատ վիճակում:

**Դատարանը փաստել է, որ քննարկվող գործով լուսանկարն արվել է հանրային վայրում, որը ոչ մեկուսացված էր և ոչ էլ հասարակության տեսադաշտից դուրս՝ դա որոշիչ կշիռ է հաղորդում:** Դատարանը նշել է նաև, որ անձնական կյանքի հասկացությունը տարածվում է անձի ինքնությանը վերաբերող ասպեկտներին, ինչպիսիք են անձի անունը, լուսանկարը կամ ֆիզիկական և բարոյական ամբողջականությունը:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված երաշխիքը հիմնականում նպատակ ունի ապահովել այլ մարդկանց հետ հարաբերություններում յուրաքանչյուր անձի անհատականության զարգացումը՝ առանց արտաքին միջամտության:

Լուսանկարների հետ կապված Դատարանը հաստատել է, որ անձի պատկերը հանդիսանում է իր անհատականության գլխավոր հատկանիշներից, քանի որ այն ի ցույց է դնում անձի ուրույն հատկանիշները և տարբերակում է անձին իր նմաններից: Անձի պատկերի պաշտպանությունն այդպիսով անձնական զարգացման էական բաղադրիչներից է: **Այն առավելապես ենթադրում է անձի՝ այդ պատկերի օգտագործումը հսկելու, ներառյալ դրա հրապարակումն արգելելու իրավունքը** (տե՛ս վերը նշված Ռեկլոսը և Դավուրիսն ընդդեմ Հունաստանի՝ կետ 40): Չնայած 8-րդ հոդվածի հիմնական նպատակը անձին հանրային իշխանությունների կամայական միջամտությունից պաշտպանությունն է, այն պարզապես չի հարկադրում պետությանը ձեռնպահ մնալ այդպիսի միջամտությունից. ի հավելումն պետության բացասական պարտականության կարող են լինել անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ արդյունավետ հարգանքի դրական պարտավորություններ: Այդ պարտավորությունները կարող են ներառել անձնական կյանքի նկատմամբ հարգանք ապահովելու համար նախատեսված միջոցների ընդունումը նույնիսկ անհատների՝ միմյանց միջև առկա հարաբերությունների կապակցությամբ (տե՛ս Իքսը և Իգրեկն ընդդեմ Նիդեռլանդների, 26 մարտի 1985թ., կետ 23, Սերիա A թիվ 91, և վերը նշված Արմոնասը՝ կետ 36: Դա վերաբերում է նաև անձի պատկերի՝ այլ անձանց ոտնձգություններից

պաշտպանությանը (տե՛ս վորը նշված Շյուսել, Ֆոն Հաննովերը՝ կետ 57; և Ռեկլոսը և Դավոուրլիսը՝ կետ 35):

Պետության՝ 8-րդ հոդվածով սահմանված դրական և բացասական պարտավորությունների բաժանարարը ինքնին չի ենթադրում հստակ սահմանում. կիրառելի սկզբունքներն, այնուամենայնիվ, համանման են: **Երկու ենթատեքստերում հաշվի պետք է առնվի համապատասխան մրցակցող շահերի միջև հաստատման ենթակա արդարացի հավասարակշռությունը** (տե՛ս Ուայթն ընդդեմ Շվեդիայի, թիվ 42435/02, կետ 20, 19 սեպտեմբերի 2006թ., և վեր նշված Գուրգենիձեն՝ կետ 37):

Վերոգրյալի իրավանորմերի համատեքստում հարկ է արձանագրել, որ ՀԴՄ կանոնների խախտման վարույթներում տեսաձայնագրող տեխնիկական միջոցներ կիրառելը ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսելու դեպքում դրա կիրառումը կլինի լիովին իրավաչափ, **քանի որ չի կրելու սիստեմատիկ բնույթ**, հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին հանձնվող (իրագրվող, հարկային մարմնի պաշտոնական կայքում տեղադրվող)՝ խախտումն ամրագրած տեսաձայնագրության կադրում արձանագրված **անձանց պատկերները մթնեցվելու են**, կիրառվելու է միայն կոնկրետ հանձնարարագրի շրջանակներում, օգտագործվելու են մինչև հսկիչ գնում (գնումներ) կատարելու պահը և կատարված հսկիչ գնման (գնումների) արդյունքում խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ խախտման արձանագրման ընթացքում, իսկ կամայականության դրսևորումը բացառվում է այն հանգամանքով, որ տեսաձայնագրող տեխնիկական միջոցների կիրառումը կարող է իրականացվել միայն կոնկրետ հանձնարարագրի շրջանակներում, կոնկրետ տնտեսվարողի մոտ, հանձնարարագրով նշված ժամկետի շրջանակներում, իսկ Հանձնարարագիրը տրվում է ՊԵԿ նախագահի կողմից: Ավելին, նշված օրենսդրական հնարավորության նախատեսումը անհրաժեշտ է ժողովրդական հասարակությունում, քանի որ կոչված է ապահովելու երկրի տնտեսական բարեկեցությունը և ապահովելու արդյունավետ հսկողություն հարկ վճարելու սահմանադրական պարտականության իրականացման նկատմամբ:

Ինչ վերաբերում է տեսաձայնագրում կիրառելու դեպքում բնակարանի անձեռնխելիության խախտման հնարավոր դեպքերին, ապա հարկ է նկատել, որ անդրադառնալով բնակարանի հասկացության մեկնաբանությանը, Մարդու իրավունքների

եվրոպական դատարանը նշել է, որ. «բնակարան հասկացությունն ինքնավար է և չի սահմանափակվում ազգային օրենսդրումը նախատեսված սահմանումներով»<sup>4</sup>: **Ընդ որում գրասենյակային և բիզնես նշանակության տարածքները ևս կարող են օգտվել բնակարանի անձեռնմխելիության երաշխիքից**<sup>5</sup>: Այդուհանդերձ ՄԻԵԴ- արձանագրել է, որ արտադրական տարածքները, որոնք օգտագործվում են բացառապես մասնագիտական նպատակներով, օրինակ՝ պահեստային տարածքը, հացի փուռը և այլն, չեն կարող Կոնվենցիայի իմաստով օգտվել բնակարանի անձեռնմխելիությունից<sup>6</sup>:

Հարկ է նկատել նաև, որ բնակարանի անձեռնմխելիության խախտում առկա չի կարող լինել, եթե այն նախատեսված է օրենքով<sup>7</sup>, կոչված է ապահովելու Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակներից որևէ մեկի իրականացմանը<sup>8</sup>, և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում<sup>9</sup>: Որպես իրավաչափ նպատակ, ի թիվս այլնի, կարող է լինել հսկողությունը՝ հարկերից խուսափելը բացառելու նպատակով:<sup>10</sup> Հարկ է նկատել նաև, որ իրավաբանական անձանց(անհատ ձեռնարկատերերին) պատկանող օբյեկտների անձեռնմխելիությունը որոշելիս դատարանի գնահատման շրջանակը ավելի լայն է<sup>11</sup>: Դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի 8-րդ հոդվածին միջամտության համաչափությունը հարկերից խուսափելու դեմ պայքարի արդյունավետության տեսանկյունից:<sup>12</sup> **Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ որպես կանոն բնակարանի անձեռնմխելիությամբ օժտված են այն տարածքները, որոնք առանց սեփականատիրոջ թույլտվության կամ դատական սանկցիայի հասանելի չեն երրորդ անձանց (այդ թվում՝ հանրային իշխանության մարմինների) համար:** Այնինչ, տվյալ դեպքում ՀԴՄ կիրառող առևտրային օբյեկտները բաց են յուրաքանչյուր անձի մուտքի համար, և մուտք գործելու որևէ թույլտվություն չի պահանջում: Ավելին, ՄԻԵԴ նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 8-րդ հոդվածի իմաստով բնակարանի

<sup>4</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-155353%22> , պարբերություն 206:

<sup>5</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-57887%22> , պարբերություն 309:

<sup>6</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-83273%22> :

<sup>7</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-68191%22> , պարբերություն 29 և 31:

<sup>8</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-80953%22> , պարբերություն 40:

<sup>9</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-58125%22> , պարբերություն 47:

<sup>10</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-167573%22> , պարբերություն 48:

<sup>11</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-117133%22> , պարբերություն 159:

<sup>12</sup> <https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:%22001-117133%22> , պարբերություն 172-175:

անձեռնխելիության իրավունքին միջամտությունը, ի թիվս այլնի, կարող է դրսևորվել հետևյալ ձևերով.

1. Գույքի բռնագրավումը կամ քանդումը,
2. Բնակարան վերադառնալուն արգելելը, խոչընդոտելը,
3. Իրավապահ մարմինների մուտքը բնակարան և փնտրողական գործողությունները,
4. Արգելադրման և առգրավման աշխատանքները,
5. Արտաքսումը բնակարանից,
6. Հարկադիր օտարումը:

Միջազգային փորձի մասով հարկ ենք համարում անդրադառնալ Վրաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին, որի 258-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմինն իրավունք ունի հարկ վճարողից ապրանքների/ծառայությունների հսկիչ գնում կամ (և) գնում իրականացնելու առաջարկի ընթացքում առանց դատավորի հրամանի կիրառել ընթացակարգի արձանագրման տեխնիկական միջոցներ (17.12.2010 N4114):

Այսինքն, Վրաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի տվյալ կարգավորումից բխում է, որ հարկային ուսումնասիրության տեսակ հանդիսացող հսկիչ գնման կամ նման գնման առաջարկի դեպքում հարկային մարմնի աշխատակիցը իրավասու է տեխնիկական միջոցների կիրառմամբ կատարել տվյալ ուսումնասիրության ընթացակարգի արձանագրում: Սա մի կողմից թույլ է տալիս ապահովել ընթացակարգի ամբողջական արձանագրում, նույնիսկ եթե տվյալ ընթացակարգով եղել են խախտումներ, ապա դրանք կլինեն արձանագրված և կապահովեն քաղաքացիների իրավունքների պահպանությունը, իսկ իրավունքի խախտման դեպքում նաև դրանց վերականգնումը, բացի այդ տվյալ կարգավորումը թույլ է տալիս ապահովել վարույթի լրիվությունը, օբյեկտիվությունը և բազմակողմանիությունը:

Բելառուսի Հանրապետության հարկային օրենսգրքի 81-րդ հոդվածի (Հարկային մարմինների և նրանց պաշտոնատար անձանց իրավունքները) 1-ին մասի 1<sup>32</sup>-րդ կետի համաձայն՝ հարկային մարմինները և նրանց պաշտոնատար անձինք իրենց իրավասության սահմաններում իրավունք ունեն ստուգում անցկացնելիս վերահսկելու օրենսդրության համապատասխանությունը, իրավախախտումների փաստերը հաստատող ապացույցներ



հավաքելու և **արձանագրելու նպատակով Քելառուսի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից սահմանված կարգով օգտագործել տեխնիկական միջոցներ, ներառյալ ձայնային և տեսանկարահանման, նկարահանման և լուսանկարահանման, պատճենահանման, փաստաթղթերի սկանավորման սարքեր, թաքնված պատկերների նույնացուցիչներ:**

Ուզբեկստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 712-րդ հոդվածի (Թեմատիկ էքսպրես ուսումնասիրություն) 11-րդ պարբերության համաձայն՝ տարածքների, արտադրական, պահեստի, առևտրի և այլ տարածքների, ներառյալ հարկ վճարողի կողմից եկամուտ ստանալու կամ հարկվող օբյեկտների պահպանման հետ կապված վայրերում ստուգումն իրականացվում է աշխատատեղերի քանակի, ապրանքային արժեքների, հիմնական միջոցների կամ հարկ վճարողի կողմից հարկային պետական ծառայության պահանջին ի պատասխան ներկայացված փաստաթղթերում արտացոլված այլ գույքի առկայությունը հաստատելու համար: **Անհրաժեշտության դեպքում ստուգման ընթացքը կարող է նկարահանվել և տեսանկարահանվել:**

Ռուսաստանի Դաշնության հարկային օրենսգրքի 16<sup>1</sup>-ին հոդվածի (Հսկիչ գնում) համաձայն՝ հսկիչ գնումը (բացառությամբ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով իրականացվող փորձնական գնումների) պետք է կատարվի երկու վկաների ներկայությամբ կամ տեսանկարահանման միջոցով: Անհրաժեշտության դեպքում փորձնական գնումներ կատարելիս օգտագործվում են լուսանկարահանում, նկարահանում, տեսանկարահանում և ձայնագրման հաստատված այլ մեթոդներ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով վերոնշյալ իրավական եզրահանգումները և նորմերը՝ հայտնում ենք, որ Նախագծով նախատեսվող փոփոխության արդյունքում առևտրային օբյեկտներում հարկային հսկողության կոնկրետ միջոցների շրջանակներում իրականացվող տեսաձայնագրումը չի կարող դիտարկվել որպես բնակարանի /առևտրային օբյեկտի/ անձեռմխելիության և անձի անձնական իրավունքների խախտում, քանի որ՝

- տեսաձայնագրումը արվելու է հանրային վայրում, այլ ոչ թե՛ անձի անձնական տիրույթում,

- անձը ողջամտորեն չունի կամ չէր կարող ունենալ իր մասնավոր կյանքի գաղտնիության լեգիտիմ ակնկալիք

- հետապնդելու է իրավաչափ նպատակ,

- չի կրելու սիստեմատիկ բնույթ՝ կիրառվելու է միայն կոնկրետ հանձնարարագրի շրջանակներում

- խախտումն ամրագրած տեսաձայնագրության կադրում արձանագրված անձանց պատկերները մթնեցվելու են

- իրականացվելու է երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև իրավախախտման կանխման կամ բացահայտման նպատակով

- ապահովելու է մրցակցող շահերի /պետության և մասնավոր անձի/ միջև հաստատման ենթակա արդարացի շահերի հավասարակշռությունը

- անձի անձնական անձեռնմխելիության խախտում չի դիտարկվելու, քանի որ նախատեսվելու է օրենքով, կոչված է ապահովելու Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակներից որևէ մեկի իրականացումը, և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Այսպիսով, վերը նշվածի համատեքստում, Նախագծի նպատակն է ապահովել անհրաժեշտ իրավական բազա, որպեսզի հարկային հսկողության ընթացքում խախտումներ բացահայտելու համար կիրառվի տեսաձայնագրում, այդպիսի տեխնիկական հնարավորություն ունեցող սարքերի միջոցով, քանի որ ներկա իրավակարգավորումների պարագայում հնարավոր չէ այն իրականացնել: Մասնավորապես, Նախագծով նախատեսվում է, որ թեմատիկ հարկային ստուգման շրջանակներում արձանագրված խախտման փաստը հաստատող հանգամանքները հիմնավորելու նպատակով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք կարող են օգտագործել ծառայողականտեսաձայնագրող տեխնիկական միջոցներ (այսուհետ՝ տեխնիկական միջոցներ) հարկային հսկողության տվյալ լիազորությունների իրականացմամբ սահմանափակվող ժամկետում: Միաժամանակ, նախատեսվել է տեխնիկական միջոցները օգտագործել ոչ գաղտնի եղանակով, ընդ որում՝ թեմատիկ հարկային ստուգման ընթացքում իրականացվող հսկիչ գնման շրջանակում տեխնիկական միջոցներն օգտագործվելու են մինչև հսկիչ գնում (գնումներ) կատարելու պահը և կատարված հսկիչ գնման (գնումների) արդյունքում խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ խախտման արձանագրման ընթացքում:

Փոփոխության արդյունքում հնարավոր կլինի ավելի արդյունավետ պայքար մղել սովորալին տնտեսության դեմ և բացառել շրջանառությունը թաքցնելու դեպքերը: Իսկ ստուգման ակտի վիճարկման դեպքում հնարավոր կլինի ներկայացնել հիմնավոր ապացույց՝ իրավախախտման փաստն արձանագրող:

Օրենսգրքի 343-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին ենթակետով սահմանված է, որ հարկային հսկողության շրջանակներում արտագնա հարկային ուսումնասիրությունների տեսակ է համարվում հսկիչ գնումը: Նախագծով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել հսկիչ գնումը: Միաժամանակ, Նախագծով նախատեսվում է Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, մասնավորապես՝ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված թեմատիկ հարկային ստուգումների 1-4-րդ տեսակները նախատեսվում են որպես թեմատիկ հարկային ստուգման հարցեր: Միևնույն ժամանակ, որպես թեմատիկ հարկային ստուգման նոր հարցեր, լրացվել են 5-9-րդ կետերը: Այս կապակցությամբ Նախագծում լրացվում է նոր՝ 339.1-ին հոդված, որով նախատեսվում է վերոնշյալ թեմատիկ հարկային ստուգման հարցերի թեմատիկ հարկային ստուգման շրջանակում իրականացվող հսկիչ գնման ընթացակարգ:

Նախագծով փոփոխություններ են կատարվում Օրենսգրքի 353-րդ հոդվածում, մասնավորապես՝ կանոնակարգվում են իրեր, փորձանմուշներ և փաստաթղթեր առգրավելու հետ կապված հարաբերությունները՝ միաժամանակ նախատեսելով առգրավված էլեկտրոնային սարքերում կամ կրիչներում պարունակվող թվային տվյալների գնումը՝ բացառապես դատարանի որոշման հիման վրա կատարելու հետ կապված կանոնակարգում: Վերջինիս շրջանակներում մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է կանոնակարգել հարկային մարմնի կողմից առգրավված էլեկտրոնային սարքերում կամ կրիչներում պարունակվող թվային տվյալների գնում կատարելու թույլտվություն ձեռք բերելու վերաբերյալ գործերի քննության ընթացակարգը:

Նախագծով հստակեցվում են նաև հարկային հսկողության ընթացքում հարկային մարմնի (հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի) լիազորությունները՝ Նախագծով նախատեսելով փոփոխություն Օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի «բ» ենթակետում, ըստ որի՝ հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար

անձը իրավունք ունի նաև առգրավել փաստաթղթեր, իրեր կամ փորձանմուշներ, որոնք անմիջականորեն առնչվում են հարկային հսկողության նպատակներին ու հարցերին, ինչպես նաև հարկային հսկողության ընթացքում իրականացնելու տեսաձայնագրում: Մասնավորապես, Նախագծով նախատեսվում է նշված ենթակետից հանել «և որոնք վերցնելը չի խոչընդոտում հարկ վճարողի բնականոն աշխատանքին» բառերը՝ հաշվի առնելով, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր ապահովել հարկ վճարողի բնականոն աշխատանքին չխոչընդոտելու պահանջի կատարումը, ուստի նշված կանոնակարգման առկայության դեպքում հնարավոր չի լինելու առգրավել փաստաթղթեր, իրեր կամ փորձանմուշներ, որոնք անմիջականորեն առնչվում են հարկային հսկողության նպատակներին ու հարցերին, քանի որ շահարկվելու է հարկ վճարողի բնականոն գործունեությանը խոչընդոտելու հանգամանքը: Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել լրացում կատարել նաև «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում՝ նախատեսելով, որ նախորդ հարկային տարվա ընթացքում 24 միլիոն դրամի շեմը գերազանցող իրացման շրջանառություն ունեցող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը օրենքով նախատեսված հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր լինելու դեպքերում ապահովում են վաճառված ապրանքի կամ մատուցված ծառայության գումարը ստանալու, ստացված գումարը հսկիչ դրամարկղային մեքենա մուտքագրելու և հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը տրամադրելու գործողությունների տեսաձայնագրման գործընթացի իրականացումը:

Առգրավման մասով միջազգային փորձի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հարկային հսկողությունը Գերմանիայում իրականացնում է Շտոյֆի հարկային ոստիկանությունը, որը Գերմանիայի ֆինանսների նախարարության հատուկ մարմին է, որը զբաղվում է երկրի հարկային քաղաքականության գործնական իրականացմամբ:

Գերմանական հարկային օրենսգրքի դրույթների համաձայն՝ հարկային ոստիկանության ներկայացուցիչներին վերապահված են զգալի լիազորություններ քաղաքացիների խուզարկությունների և անձնական զննության, հարկային իրավախախտումներ կատարելու մեջ կասկածվող անձանց կալանավորելու, ինչպես նաև փաստաթղթերի բռնագրավման դեպքերում:

«Շթոիֆ» հարկային ուստիկանության ղեկավարությունն իրավունք ունի հարկային իրավախախտման ցանկացած փաստի բացահայտման դեպքում հատուկ հետաքննություն սկսել: Այս դեպքում հարկ վճարողի պարտականություններից է հարկային մարմին տեղեկանքներ տրամադրելը, հաշվապահական հաշվետվությունները, ամսագրերը և ձեռնարկատիրական փաստաթղթերը ներկայացնելը: Հակառակ դեպքում հարկային ուստիկանությանը վերապահված է փաստաթղթերը առգրավելու և պետական և մասնավոր հիմնարկներից բոլոր անհրաժեշտ տվյալները ստանալու բացառիկ իրավունքը, բացառությամբ պետական հատուկ ծառայությունների տրամադրության տակ գտնվող տվյալների:

Բելառուսի Հանրապետության հարկային օրենսգրքի 81-րդ հոդվածի (Հարկային մարմինների և նրանց պաշտոնատար անձանց իրավունքները) 1-ին մասի 1Ձ14-րդ կետի համաձայն՝ հարկային մարմինները և նրանց պաշտոնատար անձինք իրենց իրավասության սահմաններում իրավունք ունեն ստուգման ընթացքում (բացառությամբ կամերալ ստուգման) նույն օրենսգրքով և այլ օրենսդրական ակտերով սահմանված կարգով առգրավել հարկ վճարողի (մեկ այլ պարտավորված անձի) փաստաթղթերի բնօրինակները կամ պահանջել դրանցից քաղվածքներ կամ պատճեններ ներկայացնել:

Ռուսաստանի Դաշնության հարկային օրենսգրքի 94-րդ հոդվածի (Փաստաթղթերի և առարկաների առգրավում) 1-ին մասի համաձայն՝ փաստաթղթերի և իրերի առգրավումն իրականացվում է հարկային մարմնի՝ հարկային ստուգում իրականացնող պաշտոնատար անձի հիմնավորված որոշման հիման վրա:

Նույն որոշումը ենթակա է հաստատման հարկային ստուգում անցկացնելու մասին որոշում կայացրած հարկային մարմնի ղեկավարի (նրա տեղակալի) կողմից:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային ծառայողը առաջարկում է այն անձին, ումից առգրավվում են փաստաթղթեր և առարկաներ կամովին հանձնելու դրանք, իսկ մերժման դեպքում առգրավում է կատարում:

Եթե անձը, որից առգրավվում է, հրաժարվում է բացել այն տարածքը կամ վայրը, որտեղ կարող են գտնվել առգրավման ենթակա փաստաթղթերն ու առարկաները, հարկային ծառայողն իրավունք ունի դա անել ինքնուրույն՝ խուսափելով կողպեքներից, դռներին և այլնին անհարկի վնաս պատճառելուց:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ այն փաստաթղթերը և առարկաները, որոնք առնչություն չունեն հարկային ստուգման առարկային, ենթակա չեն առգրավման:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ չկան հարկային հսկողության իրականացնելու բավարար չեն ստուգվող անձի փաստաթղթերի պատճենները, և հարկային մարմինները բավարար հիմքեր ունեն ենթադրելու, որ փաստաթղթերի բնօրինակները կարող են ոչնչացվել, թաքցվել, ուղղվել կամ փոխարինվել, պաշտոնատար անձը իրավունք ունի նույն հոդվածով սահմանված կարգով առգրավել փաստաթղթերի բնօրինակները:

Նման փաստաթղթերի առգրավման դեպքում դրանցից պատրաստվում են պատճեններ, որոնք վավերացվում են հարկայինի պաշտոնատար անձի կողմից և հանձնվում են այն անձին, ումից առգրավվել են: Փաստաթղթերի պատճեն պատրաստելու կամ փոխանցելու անհնարինության դեպքում հարկային մարմինը դրանք փոխանցում է այն անձին, ումից առգրավվել են փաստաթղթերը՝ առգրավումից հետո հնգօրյա ժամկետում:

Վրաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 264-րդ հոդվածի (Արտագնա հարկային ստուգում) 8-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի լիազորված անձն իրավունք ունի պահանջելու տրամադրել հարկային պարտավորությանը վերաբերող հաշվապահական փաստաթղթերի և/կամ հարկման հետ կապված տեղեկություններ պարունակող փաստաթղթերի պատշաճ կերպով վավերացված պատճենները, իսկ եթե հարկ վճարողը չի կատարում այդ պահանջը, առգրավել նշված փաստաթղթերի բնօրինակները, որոնք ստուգումն ավարտելուց հետո վերադարձվում են հարկ վճարողին: Փաստաթղթերի առգրավման դեպքում կազմվում է առգրավման մասին արձանագրություն:

Ֆրանսիայի Հանրապետության հարկային ընթացակարգերի վերաբերյալ օրենսգրքի L12-րդ հոդվածի համաձայն՝ նույն գրքում նախատեսված պայմաններով հարկային մարմինը կարող է ուսումնասիրություն իրականացնել ֆիզիկական անձանց հարկային իրավիճակի վերաբերյալ եկամտահարկի հետ կապված՝ անկախ նրանից, թե նրանք բնակվում են Ֆրանսիայում, թե ոչ:

Ստուգման ծանուցման մեջ նշվում է հարկային մարմնին հայտնի հաշիվների ցանկը, որոնց համար հարկային մարմինը ֆինանսական հաստատություններից և հարկ վճարողներից պահանջում է հաշվետվություններ ներկայացնել:

Նույն օրենսգրքի L13 հոդվածի համաձայն՝ հարկային մարմինները նույն գրքում նախատեսված կանոններին հետևելով տեղում ստուգում են հաշվապահական հաշվառման փաստաթղթերը պահելու և ներկայացնելու համար անհրաժեշտ հարկ վճարողների հաշիվները:

Նույն օրենսգրքի L13 F հոդվածի համաձայն՝ հարկային մարմինները Լ. 12 և Լ. 13 հոդվածներով նախատեսված հսկողության ընթացակարգերի և Լ. 198 A հոդվածով նախատեսված հետաքննության ընթացակարգի շրջանակներում կարող են, առանց հարկ վճարողի առարկելու, վերցնել այն փաստաթղթերի պատճենները, որոնց նրանք առնչվում են:

Նույն օրենսգրքի L80 F հոդվածի համաձայն՝ հարկային մարմինները կարող են ցանկացած եղանակով և ցանկացած միջոցով ստանալ կամ պատճենել այն փաստաթղթերը, որոնք առնչվում են այն գործառնություններին, որոնք հիմք են հանդիսացել կամ որոնք պետք են նույն հոդվածով նախատեսված հսկողության համար: Եթե նույն 289-րդ հոդվածի VII-ի 1<sup>o</sup>-ով նախատեսված հսկողությունն իրականացվում է էլեկտրոնային եղանակով, ապա հարկվող անձինք պարտավոր են դրանք ներկայացնել էլեկտրոնային ձևով: Հարկային մարմինները կարող են վերցնել այդ հսկողության ընթացքում առաջացած տեղեկատվությունը կամ փաստաթղթերը, ինչպես նաև փաստաթղթերի պատճենները ցանկացած միջոցով և ցանկացած կրիչով:

Միաժամանակ, Նախագծով նախատեսվում է, որ հարկային մարմինը թեմատիկ հարկային ստուգումն իրականացնում է ռիսկային համարվող հարկ վճարողների մոտ, իսկ ռիսկի վրա հիմնված թեմատիկ հարկային ստուգման ռիսկայնությունը որոշող չափանիշները սահմանում է հարկային մարմինը: Նախատեսվել է, որ ռիսկի վրա հիմնված թեմատիկ հարկային ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատում է Կառավարությունը, իսկ հարկային մարմինը՝ դրանց հաշվարկման և գնահատման կարգը, որում պարունակվող տեղեկատվությունը, այդ թվում՝ ռիսկերի պրոֆիլներում ու ցուցիչներում պարունակվող տեղեկատվությունը, գաղտնի է և ենթակա չէ հրապարակման: Նախագծով նախատեսվել է նաև, որ ռիսկի վրա հիմնված համալիր հարկային և տրանսֆերային գնագոյացման ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների հաշվարկման և գնահատման՝ հարկային մարմնի

կողմից սահմանվող կարգում պարունակվող տեղեկատվությունը, այդ թվում՝ ռիսկերի պրոֆիլներում ու ցուցիչներում պարունակվող տեղեկատվությունը, գաղտնի է և ենթակա չէ հրապարակման:

Նախագծով նախատեսվում է նաև Օրենսգրքի 411-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, որի արդյունքում ավելացվում է հարկ վճարողի գործունեության իրականացման հասցեում սահմանված տեղեկություններ չփակցնելու համար նախատեսված տուգանքների չափը: Հարկ ենք համարում նշել, իրավակիրառ պրակտիկայում նշված հակաիրավական արարքի համար Օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված նվազ չափը չի արդարացնում նշված հոդվածով սահմանված տուգանքի գանձման ուղղությամբ հարկային մարմնի կողմից ձեռնարկված գործողությունների ընթացքում ծախսվող մարդկային և ֆինանսական ռեսուրսները, միաժամանակ, չի կանխում կամ նվազեցնում նշված հակաիրավական արարքի կատարումը: Հետևաբար, նշված հակաիրավական արարքի համար նախատեսված տուգանքի չափի ավելացմամբ ակնկալվում է նպաստել հարկ վճարողների շրջանում հարկային կարգապահության պահպանմանը:

Ելնելով վերոգրյալից՝ առկա օրենսդրական բացերը վերացնելու և հարկային վարչարարության ընթացքում առաջացող խնդիրների կանոնակարգման նպատակով մշակվել է Նախագիծը:

### **3. Առաջարկվող կարգավորման բնույթը.**

Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով, մշակվել են Նախագծերը:

### **4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Նախագծերը մշակվել են ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության կողմից:

**5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ**



Նախագծերի ընդունումը չի բխում Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագրից, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններից:

### **6.2 Նպատակը և ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունմամբ կնախատեսվեն թեմատիկ հարկային ստուգման շրջանակներում արձանագրված խախտման փաստը հաստատող հանգամանքները հիմնավորելու նպատակով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց տեսաձայնագրող տեխնիկական միջոցներ կիրառելու իրավասություն վերապահող կանոնակարգումներ, կբարձրանա հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողական աշխատանքների արդյունավետությունը, ինչպես նաև հնարավորինս կբացառվեն ՀՀ ՊԵԿ կողմից իրականացված վարչարարության արդյունքում կայացված վարչական ակտերի վիճարկման և անվավեր ճանաչման դեպքերը:

«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ կկանոնակարգվի հարկային մարմնի կողմից առգրավված էլեկտրոնային սարքերում կամ կրիչներում պարունակվող թվային տվյալների զննում կատարելու թույլտվություն ձեռք բերելու վերաբերյալ գործերի քննության ընթացակարգը:

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ նախորդ հարկային տարվա ընթացքում 24 միլիոն դրամի շեմը գերազանցող իրացման շրջանառություն ունեցող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը օրենքով նախատեսված հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր լինելու դեպքերում կապահովվի վաճառված ապրանքի կամ մատուցված ծառայության գումարը ստանալու, ստացված գումարը հսկիչ դրամարկղային մեքենա մուտքագրելու և հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը տրամադրելու գործողությունների տեսաձայնագրման գործընթացի իրականացումը: